

Ողջուն,

Համալսարանն ավարտել եմ անցյալ տարի: Մասնագիտությամբ սոցիալ-հոգեբան եմ: Ինձ հարցրել էիր հետաքրքրություններիս մասին. սիրում եմ գրքեր կարդալ, ֆիլմեր դիտել ու մասնագիտությանս առնչվող ուսումնասիրություններ կատարել:

Կարդացի նամակդ: Քո նախադասություններից մեկում ընդգծել էիր, որ եթե կարդում ես նամակս, ուրեմն դու էլ ես մեկ քայլ դեպի առաջ արել և ուզում ես այն, ինչ ես եմ ուզում: Իրականում, այս նախագծին միանալն արդեն նշանակում է, որ այդ քայլերից մեկը կատարել եմ:

Ելնելով իմ մասնագիտությունից՝ ես ամբողջ մանրամասնությամբ հասկանում եմ պատերազմի հոգեբանական ազդեցությունը, դրանից առաջ եկած բարդությունները: Ցավ, արցունքներ, դառնություն, մահ, բաժանում, վախ. ահա սա է Պատերազմը:

Գիտեմ՝ ո՛չ դու, ո՛չ էլ ես մեղավոր չենք, որ մեր երկրները թշնամիներ են: Որպես երկու երկիր՝ շատ կորուստներ ու զոհեր ենք տվել: Ինչպես դուք չեք ուզում, որ մի գեղեցիկ օր ադրբեջանցի զինվորը կրակի հայ զինվորին, նույն կերպ մենք չեք ուզում, որ հայ զինվորը սպանի երիտասարդ ադրբեջանցի զինվորին: Որքան հարազատներ, ընկերներ ունենք, որոնք ծառայում են առաջնագծում և ամեն օր նրանց ընտանիքները անհանգստանում ու վախենում են նրանց համար: Մեզ խաղաղությունն է միավորում: Մենք պետք է միավորվենք այս կարգախոսի ներքո: Որովհետև և՛ ձեր, և՛ մեր ուզածն էլ այն է, որ մարդիկ ապրեն առանց վախի ու հանգիստ՝ հանուն առողջ երեխաների, երջանիկ ընտանիքների ու հանգիստ կյանքի: Այդ հարցում քեզ հասկանում եմ:

Պատերազմական շրջանում չեմ ծնվել, սակայն կարդածացս գրքերից, դիտածս ֆիլմերից, ուսումնասիրություններիցս ու լսածներիցս ելնելով՝ պատկերացնում եմ պատերազմն իր մանրուքներով:

Պապիկս իր ընտանիքը կորցրել է պատերազմում, որը նրա հոգեբանության վրա բացասական հետքեր է թողել: Պատերազմի ժամանակ տեղի ունեցած սարսափելի մի դեպքի պատճառով պապիկս դաժան մարդ է դարձել: Նրա մեջ առաջ են եկել ատելությունն ու վախը: Պատմում էր, որ որբ է եղել և ցամաք հաց ուտելով է մեծացել, սակայն, այնուամենայնիվ, ապրել է: Մի ժամանակ գավակներին, թռռներին պատկերավոր պատմում էր պատերազմի սարսափների ու իր վերապրածների մասին, այնպես էր պատմում, որ ինքդ քեզ վրա զգում էիր այդ ամենը: Մարդկանց հոգին վիրավորողի, հարազատներից զրկողի անունը պատերազմ է:

Ես էլ գիտեմ, որ մենք բարեկամներ ենք եղել: Միասին հաց ենք կիսել: Նշանակում է, որ հիմա էլ կարող ենք լինել: Պատմության ընթացքում շատ բաներ ենք վերապրել: Թե՛ տարածքային, թե՛ մարդկային կորուստներ ենք տվել: Գիտեմ, գուցե դժվար է, սակայն չի կարելի կենտրոնանալ միայն թշնամանքի, պատերազմի վրա ու մոռանալ, որ մարդիկ խաղաղություն են ուզում: Մի ծրագրով այցելել էի առաջնագծին մոտ շրջաններից մեկը ու հանդիպել այնտեղի երեխաների հետ: Լսել եմ պատերազմի,

պատերազմի հետևանքների ու դառնությունների մասին նրանց մտքերը: Նրանք հուզված էին և չէին կարողանում հարցերին ամբողջությամբ պատասխանել, նրանց վրա նաև իր ազդեցությունն էր գործել այն, որ քաջատեղյակ էին իրենց հարազատների վերապրածներին:

Եթե պատերազմի մասին միայն լսել ես կամ կարդացել, ու քեզ համար դժվար է խոսել այդ մասին, ապա այն վերապրած, տազնապի ու վախի մեջ, հարազատներին կորցրած մարդկանց համար ավելի բարդ է գրել այդ ամենի մասին: Գիտեմ, որ առանց մեր մեջ խաղաղություն ստեղծելու, առանց այդ կարգախոսը մեր շրջապատում տարածելու ոչինչի չի ստացվի: Վտանգավոր գոտիներում ապրողներն ամեն օր վախի մեջ են ապրում: Որքա՞ն մայրեր կան, որոնք ապրում են պատերազմի սարսափները, տազնապը ու անհանգստանում են իրենց զավակների համար: Այսուհետ նրանց չենք կարող փոխել, սակայն կարող ենք քայլեր կատարել, որպեսզի չլինեն այդ սարսափները:

Մենք ուժեղ ենք միասին...

Սիրով